ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<<12>> <<հոկտեմբերի>> 2021թ. N 161-Ա

ք.Եղեգնաձոր

ՈՐՈՇՈՒՄ

ՄՈՒՐԱԴ ՇԱՎԱՐՇԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2.1-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի ղեկավար Սիմոն Բաբայանի լիազորությունների ժամկետը 2021 թվականի հոկտեմբերի 8-ին լրանալու հանգամանքը և Մուրադ Շավարշի Ստեփանյանի Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնում նշանակվելու մասին անձնական դիմումը՝

Որոշում եմ

1. Մուրադ Շավարշի Ստեփանյանին 2021 թվականի հոկտեմբերի 12-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնումը:
2. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ ընդունել ի գիտություն, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի՝ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնավարման ընթացքում չեն կարող կատարվել աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կառուցվածքային և հաստիքացուցակի փոփոխություններ:

10/12/2021

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ